

Վերնագիր՝ Debt Collections Policy
Debt Collections Policy

Վարչական բաժին՝ Patient Services

ԿԱՐԵՎՈՐ ԾԱՆՈՒՑԱԳԻՐ՝

Այս փաստաթղթի պաշտոնական տարբերակը գտնվում է Քաղաքականության և ընթացակարգի կառավարչում (PPM) և կարող է վերամշակված լինել փաստաթղթի տպագրումից հետո:

Պարտքերի գանձման քաղաքականություն

I. Նպատակ

- a. Cedars-Sinai Medical Center-ը, Cedars-Sinai Marina Hospital-ը, Cedars-Sinai Medical Care Foundation-ը («CSMCF»), Huntington Hospital-ը և Huntington Health Physicians-ը (յուրաքանչյուրը առանձին՝ «Կազմակերպություն») տրամադրում են կարեկցական ինսալթ հիվանդներին, երբ նրանք հիվանդանոցային ծառայությունների կարիք ունեն: Բոլոր հիվանդները կամ նրանց երաշխավորները ֆինանսական պատասխանատվություն են կրում Կազմակերպությունում ստացած ծառայությունների առնչությամբ և պետք է կազմակերպեն վճարումը ծառայությունների մատուցումից առաջ կամ հետո: Կազմակերպելը կարող է ներառել ապահովագրական ծրագրի կողմից վճարումները, այդ թվում՝ Դաշնային և Կալիֆորնիայի կառավարության կողմից առաջարկվող ծրագրերի միջոցով վճարումները: Վճարման կազմակերպումը կարող է կատարվել նաև ուղղակի հիվանդի հետ, ենթակա Կազմակերպության վճարման ժամկետներին և պայմաններին: Կազմակերպությունը հանձն է առել երաշխավորել, որ ֆինանսական պարտավորությունների մասին հաղորդակցություններն անհիմն կերպով չազդեն բուժման հերթագրման վրա:
- b. Սույն Քաղաքականությունը սահմանում է Կազմակերպության հանդեպ պարտք ունեցող հիվանդների հաշիվների գանձման արդար, ողջամիտ և հետևողական միջոցների սահմանման ուղեցույցներ և ընթացակարգեր, նաև երաշխավորում է, որ Կազմակերպությունը և Կազմակերպության հետ համագործակցող գանձման ցանկացած գործակալություն բոլոր հիվանդներին, նրանց ընտանիքներին և այլ անձանց կվերաբերվի արդարությամբ, արժանապատվությամբ, կարեկցանքով և հարգալից: Ի լրումն, սույն Քաղաքականությունը երաշխավորում է, որ Կազմակերպությունը և իր նշանակած գանձման գործակալությունները կհամապատասխանեն բոլոր կիրառելի Դաշնային և Կալիֆորնիայի օրենքներին, կազմակերպչական քաղաքականությանն ու ընթացակարգերին, ինչպես նաև ոլորտի լավագույն փորձին, այդ թվում, առանց սահմանափակման, հետևյալ օրենքներին և դրանց կիրառման կանոնակարգերին՝
 - i. 26 U.S.C. 501(r) և հաջորդ բաժինները: Հավելյալ պահանջներ որոշ հիվանդանոցների համար:
 - ii. 15 U.S.C 1692 և հաջորդ բաժինները: Պարտքի գանձման գործելակերպեր:
 - iii. Կալիֆորնիայի Քաղաքացիական օրենսգրքի (California Civil Code) 1788 և հաջորդ բաժինները: Պարտքի գանձման արդար գործելակերպեր:
 - iv. Կալիֆորնիայի առողջապահության և անվտանգության օրենսգրքի (California Health & Safety Code) 1339.50 և հաջորդ բաժինները: Վճարողների իրավունքների օրինագիծ:

Վերնագիր՝ Debt Collections Policy
Debt Collections Policy

Վարչական բաժին՝ Patient Services

ԿԱՐԵՎՈՐ ԾԱՆՈՒՑԱԳԻՐ՝

Այս փաստաթղթի պաշտոնական տարբերակը գտնվում է Քաղաքականության և ընթացակարգի կառավարչում (PPM) և կարող է վերամշակված լինել փաստաթղթի տպագրումից հետո:

- v. Կալիֆորնիայի առողջապահության և անվտանգության օրենսգրքի 127400 և հաջորդ բաժինները: Հիվանդանոցների արդար գնանշանակումների քաղաքականություններ:
- vi. Ամերիկյան հիվանդանոցների ընկերակցության (American Hospital Association) Հիվանդների հաշվազրերի ուղեցույցներ:

II. Քաղաքականություն

a. Ընդհանուր գործելակերպեր

- i. Եթե հիվանդի հաշիվը վճարման է ենթակա ապահովագրական ընկերության կողմից, ապա սկզբնական հաշիվը ուղարկվում է անմիջապես նշանակված ապահովագրողին՝ ապահովագրողի կողմից պարտքի մասնակի կամ ամբողջ գումարը ստանալու համար:
- ii. Ապահովագրական վճարումներից հետո հիվանդների հաշվեկշռային հաշիվները անմիջապես կներկայացվեն հիվանդին:
- iii. Կազմակերպությունը և հիվանդը կիսում են հիվանդի բոլոր հաշիվների ժամանակին և ճշգրիտ լուծման պատասխանատվությունը: Այս գործընթացում կարևոր է հիվանդների համագործակցությունը և հաղորդակցությունը: Կազմակերպությունը պետք է ողջամիտ և հետևողական ջանքեր գործադրի՝ հիվանդներին իրենց ֆինանսական պարտավորությունների կատարման հարցում օգնելու համար:
- iv. Վճարման ծրագրերը (payment plans) կարող են կազմակերպվել Կազմակերպության հետ՝ յուրաքանչյուր դեպքի հիման վրա: Վճարման ծրագրեր կարող են սահմանվել Կազմակերպության ֆինանսական օգնության քաղաքականության շրջանակներում օգնության շնորհման կապակցությամբ կամ որպես Կազմակերպության և հիվանդի միջև պարտքի վճարման պայմանավորվածության մաս:
 - 1. Վճարման ծրագրերը գերծ են տոկոսային գանձումներից և ձևակերպման վճարներից:
 - 2. Կազմակերպությունը կարող է Առողջապահական խնայողական հաշիվները դիտարկել վճարման ծրագրի ժամկետները որոշելիս:
 - 3. Հիվանդի կամ երաշխավորի պարտավորությունն է շփվել Կազմակերպության հետ, եթե հանգամանքները փոխվում են, և վճարման ծրագրի պայմանները չեն կարող բավարարվել:
 - 4. Հաստատվելուց հետո վճարման ծրագրի պայմաններին համապատասխան վճարումների կատարման ձախողումը համարվում է պարտազանցում, և Կազմակերպությունը կարող է չեղարկել վճարման ծրագիրն ու գանձման գործողությունը ձեռնարկել միայն հիվանդի կողմից վճարման ենթակա գումարը որևէ շարունակական 90 օրվա ընթացքում չվճարելուց հետո՝ համաձայն Դաշնային և Կալիֆորնիայի օրենքների:

Վերնագիր՝ Debt Collections Policy
Debt Collections Policy

Վարչական բաժին՝ Patient Services

ԿԱՐԵՎՈՐ ԾԱՆՈՒՑԱԳԻՐ՝

Այս փաստաթղթի պաշտոնական տարբերակը գտնվում է Քաղաքականության և ընթացակարգի կառավարչում (PPM) և կարող է վերամշակված լինել փաստաթղթի տպագրումից հետո:

- a. Մինչ վճարման ծրագրի չեղարկումը Կազմակերպությունը պետք է ողջամիտ փորձ կատարի բանավոր և գրավոր ծանուցելու հիվանդին, որ վճարման ծրագիրը կարող է չեղարկվել, հիվանդին տալով արձագանքելու և վճարման ծրագրի ժամկետների շուրջ բանակցելու ևս մեկ հնարավորություն:
- b. Վճարման ծրագրի ցանկացած չեղարկման դեպքում հիվանդի ֆինանսական պատասխանատվությունը չպետք է գերազանցի վճարման ծրագրի շրջանակներում համաձայնեցված գեղչված մայր գումարը, և հիվանդը կստանա հաշվեկշիռ՝ վճարման երկարացված ծրագրի շրջանակներում նախկինում կատարված ցանկացած վճարման համար:
- v. Կազմակերպությունը հիվանդից կամ երաշխավորից պահանջում է Կազմակերպությանը վճարել ցանկացած փոխհատուցման ողջ գումարը, որը Կազմակերպության ծառայությունների համար հիվանդին կամ երաշխավորին ուղարկվել է ուղիղ՝ երրորդ կողմ հանդիսացող վճարողի կողմից: Եթե հիվանդը ստանում է օրինական լուծում, դատավճիռ կամ պարզևատրում պատասխանատու երրորդ կողմի դատական գործի շրջանակներում, որը ներառում է վճարում վնասվածքի հետ կապված առողջապահական ծառայությունների կամ բժշկական խնամքի համար, Կազմակերպությունը հիվանդից կամ երաշխավորից պահանջում է փոխհատուցել Կազմակերպությանը մատուցված համապատասխան առողջապահական ծառայությունների համար՝ մինչև այդ նպատակով ողջամտորեն շնորհված գումարի չափով:
- vi. Կազմակերպությունը բոլոր հիվանդներին տրամադրում է հետևյալ տեղեկությունը և հատուկ օգնությունը՝
 - 1. Ֆինանսական օգնության քաղաքականության Պարզ լեզվով ամփոփագիրը:
 - 2. Ֆինանսական օգնության դիմում («Դիմում») և/կամ դիմում Medi-Cal-ին կամ կառավարական օգնության այլ համապատասխան ծրագրի՝ նախատեսված չապահովագրված հիվանդների համար, ովքեր ստանում են ոչ անհետաձգելի օգնություն՝ ընդունվելուց հետո կամ դուրս գրվելուց առաջ, կամ որոշ հանգամանքներում՝ ծառայությունների մատուցումից հետո 72 ժամվա ընթացքում:
 - 3. Օգնություն ֆինանսական կամ կառավարական օգնության համար դիմելու հարցում՝ առանց հիվանդից գանձում կատարելու:
 - 4. Կազմակերպության կողմից մատուցված ծառայությունների գրավոր հաշվագիր:

Վերնագիր՝ Debt Collections Policy
Debt Collections Policy

Վարչական բաժին՝ Patient Services

ԿԱՐԵՎՈՐ ԾԱՆՈՒՑԱԳԻՐ՝

Այս փաստաթղթի պաշտոնական տարբերակը գտնվում է Քաղաքականության և ընթացակարգի կառավարչում (PPM) և կարող է վերամշակված լինել փաստաթղթի տպագրումից հետո:

5. Ամփոփ հաշվետվություն, ըստ պահանջի, ապահովագրության կողմից ակնկալվող վճարումով, եթե կիրառելի է, և հիվանդի կողմից սպասվող և վճարման ենթակա որևէ գումարով կամ բոլոր գումարներով:
6. Գրավոր հայտ, որ հիվանդը տեղեկություն տրամադրի իր առողջական ապահովագրության ծածկույթի վերաբերյալ, եթե արդեն չի տրամադրել:

b. Գանձման արտակարգ գործողությունների համար պահանջվող հաստատումներ

Կազմակերպությունը ենթարկվում է պարտքերի գանձման գործելակերպին առնչվող Դաշնային և Կալիֆորնիայի իրավական և կարգավորող պահանջներին:

Կազմակերպությունը չպետք է ձեռնարկի Գանձման արտակարգ գործողություն (Extraordinary Collection Actions, ECA)՝ բացառությամբ սույն Քաղաքականությամբ և կիրառելի օրենքով նախատեսված դեպքերի: Կազմակերպությանը և կազմակերպության հետ համագործակցող գանձման որևէ գործակալության՝

i. Երբեք չի թույլատրվում ներգրավվել հետևյալ ECA-ներում կամ գանձման գործողություններում՝

1. Վաճառել հիվանդի պարտքը:
2. Պահել անհատի աշխատավարձերը:
3. Չրկել գրավ դրված անշարժ գույքի սեփականության իրավունքից:
4. Կալանք դնել որևէ անշարժ գույքի վրա, որը մասամբ կամ ամբողջովին պատկանում է հիվանդին:
5. Նախնական բռնագանձման քայլեր ձեռնարկել կամ բռնագրավել անհատի բանկային հաշիվը կամ այլ անձնական գույք:
6. Պատճառ դառնալ անհատի կալանավորման կամ ձերբակալման դատական կարգադրության:
7. Նախագգուշացնել կամ իրականացնել մասամբ կամ ամբողջովին հիվանդին պատկանող որևէ անշարժ գույքի վաճառքը:
8. Վճարում պահանջել նախքան բժշկականորեն անհրաժեշտ օգնություն ցուցաբերելը՝ նախկինում մատուցված խնամքի համար չմարված հաշիվների պատճառով:
9. Հետաձգել կամ մերժել բժշկականորեն անհրաժեշտ խնամքը՝ Ֆինանսական օգնության քաղաքականության ներքո ընդգրկված նախկինում տրամադրված խնամքի համար հաշիվը չվճարելու պատճառով:
10. Բացասական տեղեկություն հաղորդել սպառողական վարկերի հաշվետվության գործակալությանը:

**Վերնագիր՝ Debt Collections Policy
Debt Collections Policy**

Վարչական բաժին՝ Patient Services

ԿԱՐԵՎՈՐ ԾԱՆՈՒՑԱԳԻՐ՝

Այս փաստաթղթի պաշտոնական տարբերակը գտնվում է Քաղաքականության և ընթացակարգի կառավարչում (PPM) և կարող է վերամշակված լինել փաստաթղթի տպագրումից հետո:

11. Քաղաքացիական գործ սկսել հիվանդի դեմ՝ սկզբնական հաշվագրից հետո 180 օրից առաջ վճարած չլինելու պատճառով:

- ii. Նախքան գանձման որևէ այլ գործողություն ձեռնարկելը պետք է ստանա Chief Financial Officer կամ նրա կողմից նշանակված և Chief Financial Officer և President կողմից վավերացված անձի հաստատումը:
- iii. Գանձման աշխատանքների համար չպետք է օգտագործի ֆինանսական օգնության նպատակով հիվանդի՝ Դիմումի առնչությամբ Կազմակերպության կողմից ստացված տեղեկությունը:

c. Գանձման գործողությունների կասեցում

- i. **Առկախ դիմում:** Եթե հիվանդը պատշաճ կերպով ներկայացրել է հաստատված Դիմում, ապա Կազմակերպությունը պետք է անհապաղ կասեցնի հաշվի նշանակումը գանձման գործակալությանը կամ որևէ ձեռնարկված ECA, մինչև դիմումի գործընթացի ավարտը կամ 30 օր՝ որ ժամանակահատվածն ավելի երկար լինի:
- ii. **Կառավարության կողմից հովանավորվող առկախ ծածկույթ:** Կառավարության կողմից հովանավորվող ծածկույթի կամ ծրագրերի համար առկախ դիմում ունեցող հիվանդների համար Կազմակերպությունը չպետք է գիտակցաբար հաշիվը փոխանցի գանձման գործակալությանը՝ դուրսգրումից հետո սկզբնական հաշվագրման ամսաթվից հետո 240 օրը լրանալուց առաջ:
- iii. **Համագործակցություն չմարված հաշվագիրը մարելու համար:** Կազմակերպությունը չպետք է գիտակցաբար հաշվագիր տրամադրի գանձման գործակալությանը հիվանդների ֆինանսական օգնությանը համապատասխանող բաժնեմասերի առնչությամբ, կամ եթե հիվանդը բանակցել է վճարման ծրագրի շուրջ և ողջամտորեն համագործակցում է չմարված հաշիվը մարելու համար: Գանձման գործողությունները կվերսկսվեն կիրառելի օրենքների և կանոնակարգերի համապատասխան, եթե հիվանդը/երաշխավորը վճարման ծրագրի կատարման գործում դառնում է օրնազանց:
- iv. **Հիվանդանոցի հաշվագրի գանգատի ծրագրի առկախ ծանուցում:** Կազմակերպության՝ գանձման գործակալությունների կողմից վճարումների գանձման բոլոր գործողությունները կդադարեցվեն այն բանից հետո, երբ ծանուցում ստացվի, որ հիվանդը ներկայացրել է գանգատ Department of Health Care Access and Information (HCAI) Հիվանդանոցային հաշիվների գանգատի ծրագրին: Գանձման գործակալության գործողությունները չեն վերսկսվի այնքան ժամանակ, քանի դեռ գանգատը չի լուծվել, HCAI-ի կողմից հաստատված կարգով:

Վերնագիր՝ Debt Collections Policy
Debt Collections Policy

Վարչական բաժին՝ Patient Services

ԿԱՐԵՎՈՐ ԾԱՆՈՒՑԱԳԻՐ՝

Այս փաստաթղթի պաշտոնական տարբերակը գտնվում է Քաղաքականության և ընթացակարգի կառավարչում (PPM) և կարող է վերամշակված լինել փաստաթղթի տպագրումից հետո:

- d. **Ֆինանսական օգնության իրավասությունը որոշելու ողջամիտ քայլեր:** Նախքան գանձման գործակալությանը հաշիվ նշանակելը կամ որևէ ECA ձեռնարկելը, Կազմակերպությունը պետք է ձեռնարկի հետևյալ քայլերը՝ հիվանդի ֆինանսական օգնության իրավասությունը որոշելու համար, ըստ կիրառելիության՝
- Ծանուցագրերի, ստուգումների և անհրավասու գումարների վրա հիմնված ողջամիտ ջանքեր**
 - Կազմակերպությունը պետք է ծանուցի հիվանդներին իր ֆինանսական օգնության ծրագրի մասին նախքան գանձման գործակալությանը հաշիվ նշանակելը կամ խնամքի դիմաց վճարում ստանալու համար որևէ ECA ձեռնարկելը:
 - Եթե հիվանդը չի ներկայացրել Դիմում կամ ճանաչվել է ֆինանսական օգնության համար ոչ իրավասու, ECA-ները կարող են ձեռնարկվել կիրառելի օրենքի թույլտվությամբ և համաձայն սույն Քաղաքականության:
 - Կազմակերպությունը չպետք է որևէ հիվանդի հաշիվ նշանակի գանձման գործակալությանը, քանի դեռ Կազմակերպությունը, ողջամիտ ջանքերի գործադրմամբ, նախ չի կատարել իր հնարավորության սահմաններում հիվանդի բնութագրում/ստուգում և չի որոշել, որ հիվանդը՝
 - Չի որակավորվում վճարողների այլընտրանքային աղբյուրների համար:
 - Համաձայն չէ պետական ապահովագրության կամ ծրագրերի համար դիմելու:
 - Համաձայն չէ վճարման ծրագրի/երկարաձգված վճարման ծրագրի հետ կամ այլևս չի համագործակցում բանակցված վճարման ծրագրի հետ:
 - Ենթադրական իրավասություն:** Կազմակերպությունը կարող է որոշել, որ հիվանդը իրավասու է ֆինանսական օգնության համար՝ հիմնվելով ենթադրյալ իրավասության գործընթացի վրա: Ենթադրյալ իրավասության վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ կարելի է գտնել Ֆինանսական օգնության քաղաքականության մեջ:
 - Վերջնական ծանուցագիր և ծանուցումներ հիվանդներին՝ գործողություններից 30 օր առաջ:**
 - Ենթարկվելով Դաշնային օրենքի՝ հավաքագրման գործակալությանը հաշիվ նշանակելուց կամ որևէ ECA-ի ձեռնարկելուց առնվազն 30 օր առաջ Կազմակերպությունը պետք է՝
 - Տրամադրի Պարզ լեզվով ամփոփագիրը:
 - Բացահայտի այն ECA-ները, որոնք Կազմակերպությունը մտադիր է ձեռնարկել, և նշի վերջնաժամկետ, որից հետո դրանք կարող են

Վերնագիր՝ Debt Collections Policy
Debt Collections Policy

Վարչական բաժին՝ Patient Services

ԿԱՐԵՎՈՐ ԾԱՆՈՒՑԱԳԻՐ՝

Այս փաստաթղթի պաշտոնական տարբերակը գտնվում է Քաղաքականության և ընթացակարգի կառավարչում (PPM) և կարող է վերամշակված լինել փաստաթղթի տպագրումից հետո:

ձեռնարկվել, որը կարող է լինել գրավոր ծանուցման տրամադրման օրվանից ոչ շուտ, քան 30 օր հետո:

- c. Նախքան որևէ ECA ձեռնարկելը Կազմակերպությունը պետք է ողջամիտ ջանքեր գործադրի ֆինանսական օգնության ծրագրի և Դիմումի հետ կապված օգնություն ստանալու մասին հիվանդին բանավոր ծանուցելու համար:
2. Կալիֆորնիայի օրենսդրության համաձայն՝ գանձումների համար հաշիվ նշանակելուց առաջ Կազմակերպությունը պետք է հիվանդին ուղարկի վերջնական ծանուցագիր հետևյալ տեղեկատվությամբ՝
 - a. Այն անձի կամ կազմակերպության անունը, որին նշանակվում է հաշիվը:
 - b. Նշանակվող հաշվի ծառայության ամսաթիվը (ամսաթվերը):
 - c. Հիվանդի առողջական ապահովագրության անունն ու ծրագրի տեսակը:
 - d. Ֆինանսական օգնության ծանուցագրերի, դիմումների և/կամ որոշումների հետ կապված ամսաթիվը (ամսաթվերը):
 - e. Ֆինանսական օգնության համար դիմում:
 - f. Հաշվի բացվածք ստանալու վերաբերյալ տեղեկություն:
- iv. **Ծանուցագիր նախքան գործողություններ սկսելը՝ բուժման մի քանի դեպքերի պարագայում:** Կազմակերպությունը կարող է բավարարել բուժման բազմաթիվ դեպքերի համար վերը նշված ծանուցագրի պահանջները բազմաթիվ վճարումների հաշվետվություններ ընդգրկող ծանուցագրի մեջ: Այնուամենայնիվ, կուտակված լինելու դեպքում Կազմակերպությունը պետք է մինչև 120 օր ձեռնպահ մնա գանձման գործակալությանը պարտք նշանակելուց կամ ECA ձեռնարկելուց՝ կուտակման մեջ ներառված խնամքի ամենավերջին միջադեպի համար հիվանդի առաջին դուրսգրումից հետո տրված հաշվետվությունից հետո:
- e. **Հիվանդների հաշիվների նշանակում գանձման գործակալություններին**
 - i. Երբ Կազմակերպությունը հաշիվ է նշանակում գանձման գործակալությանը, գանձման ենթակա գումար է համարվում նախկինում որոշ կամ բոլոր զեղչային պայմանավորվածություններից կամ հրաժարումներից հետո հաշվեկշռի վրա կիրառված մնացյալ գումարը:
 - ii. Որոշակի շեմերի համապատասխանող հաշվեկշիռները վերանայվում են կամ Associate Director, կամ Executive Director of Patient Services կողմից: Ի յուրմե՝ Կազմակերպությունը սահմանել է նվազագույն շեմեր՝ գանձման գործակալությանը հաշիվներ նշանակելու համար:

Վերնագիր՝ Debt Collections Policy
Debt Collections Policy

Վարչական բաժին՝ Patient Services

ԿԱՐԵՎՈՐ ԾԱՆՈՒՑԱԳԻՐ՝

Այս փաստաթղթի պաշտոնական տարբերակը գտնվում է Քաղաքականության և ընթացակարգի կառավարչում (PPM) և կարող է վերամշակված լինել փաստաթղթի տպագրումից հետո:

- iii. Եթե գանձման գործակալությունը որոշում է, որ հիվանդի հաշիվը որակավորվում է վճարման այլընտրանքային աղբյուրի համար կամ անգանձելի է, ապա գանձման գործակալությունը պետք է հաշիվը վերադարձնի Կազմակերպությանը՝ որոշման և հիմնավորող տվյալների բացատրությամբ: Կազմակերպությունը փորձ կկատարի գանձելու այլընտրանքային աղբյուրից և/կամ կաշխատի ապահովել հիվանդի իրավասությունը ֆինանսական օգնության համար:
- iv. Եթե հիվանդը հարցնում է գանձման գործակալությանը, թե արդյո՞ք Կազմակերպությունն առաջարկում է զեղչ հաշվագրված գումարից՝ ելնելով հիվանդի կարգավիճակից՝ որպես կանխիկ վճարող հիվանդ (երրորդ կողմի ծածկույթ չկա), ապա գանձման գործակալությունն անմիջապես կհաստատի բոլոր կանխիկ վճարող հիվանդների համար հատկացվող զեղչը և կիրառելի լինելու դեպքում հիվանդին կտեղեկացնի Կազմակերպության ֆինանսական օգնության ծրագրի մասին: Եթե հիվանդը ցանկանում է բանակցել տրամադրված զեղչից բարձր հավելյալ զեղչի համար, ապա գործակալությունը կարող է տեղեկացնել Կազմակերպությանը համապատասխանաբար հաշիվը ճշգրտելու թույլտվության համար:
Մինչ հիվանդի դեմ իրավական գործողության դիմելը գանձման գործակալությունը պետք է ապահովի, որ պարտքերի գանձման արդար գործելակերպին առնչվող բոլոր իրավական և կանոնակարգող պահանջները բավարարվում են, և հաստատի, որ բազմաթիվ փորձեր են կատարվել հիվանդին հասնելու և վերջինիս հետ բանակցելու ուղղությամբ: Ցանկացած այդպիսի գործողություն պետք է ստանա Vice President և Finance and Chief Revenue Cycle Officer կամ նրանց նշանակած անձի նախօրոք գրավոր հաստատումը:
- f. **Ոչ մի հանձնարարական կամ ենթակապալ:** Գանձման գործակալությունները չեն կարող նշանակել կամ ենթակապալի տակ որևէ հաշվի գանձում առանց՝
 - i. Vice President և Finance and Chief Revenue Cycle Officer կամ նրանց նշանակած անձի նախօրոք գրավոր համաձայնության և
 - ii. Սույն Քաղաքականության և Դաշնային ու Կալիֆորնիայի պահանջներին համապատասխանելու վերաբերյալ նշանակված անձի կամ ենթակապալառուի գրավոր համաձայնության:
- g. **Ընդհանուր պահանջներ նախքան գանձման գործակալության կողմից կատարվող գործողությունը**
 - i. **Հետևողականություն հաշվագրման հաշվետվություններում:** Հաշվագրման պահին Կազմակերպությունը բոլոր ցածր եկամուտ ունեցող և ապահովագրություն չունեցող հիվանդներին պետք է տրամադրի նույն տեղեկությունը ստացված

**Վերնագիր՝ Debt Collections Policy
Debt Collections Policy**

Վարչական բաժին՝ Patient Services

ԿԱՐԵՎՈՐ ԾԱՆՈՒՑԱԳԻՐ՝

Այս փաստաթղթի պաշտոնական տարբերակը գտնվում է Զաղաքականության և ընթացակարգի կառավարչում (PPM) և կարող է վերամշակված լինել փաստաթղթի տպագրումից հետո:

- Ծառայությունների և այդ ծառայությունների հետ կապված հաշվադրված գումարների վերաբերյալ, որոնք մատուցվում են Կազմակերպությունում բուժում ստացող մյուս հիվանդներին: «Ցածր եկամուտ ունեցող և ապահովագրություն չունեցող հիվանդը» այն հիվանդն է, ով իրավասու է օգնության համար Ֆինանսական օգնության քաղաքականության շրջանակներում:
- ii. **Ֆինանսական օգնության հասանելիության մասին ծանուցագիր:** Բոլոր հիվանդներին ուղղված գանձման նամակների և հաշվետվությունների մեջ Կազմակերպությունը պետք է ներառի ձևակերպումներ՝ հիվանդներին տեղեկացնելու համար, որ եթե նրանք բավարարում են եկամտի որոշակի պահանջներ, ապա կարող են իրավասու լինել կառավարության կողմից հովանավորվող վճարողների ծրագրերին կամ Կազմակերպության ֆինանսական օգնությանը: Հիվանդի հաշիվների մեջ պետք է ներառվեն նաև անունը/տիտղոսը կամ բաժանմունքը և հեռախոսահամարը՝ լրացուցիչ տեղեկությունների համար կապ հաստատելու նպատակով:
- h. **Գանձման գործակալությունների հետ հարաբերությունները**
- i. **Ենթարկվածությունը օրենքին, քաղաքականությանը և չափանիշներին:**
1. Կազմակերպության հետ պայմանագիր ունեցող գանձման գործակալությունները պետք է հավաստեն և միշտ ենթարկվեն սպառողների և հիվանդների պարտքերի գանձման համար կիրառելի Դաշնային և Կալիֆորնիայի օրենքներին:
 2. Գանձման գործակալություններից պահանջվում է հիվանդների, նրանց ընտանիքների և այլ կապված անձանց հետ վարվել արդարացիորեն, արժանապատվորեն, կարեկցանքով և հարգալից:
 3. Գանձման գործակալությունները պետք է վերանայեն և ենթարկվեն Կազմակերպության քաղաքականություններին և չափանիշներին, այդ թվում՝ առանց սահմանափակման՝ սույն Զաղաքականության և Ֆինանսական օգնության քաղաքականության վճարման ծրագրի դրույթներին:
- ii. **Գանձման գործակալությունների հետ պայմանագրեր կնքելու չափանիշներ:** Կազմակերպությունը չպետք է ներգրավի գանձման որևէ գործակալություն՝ հիվանդների հաշիվները գանձելու համար, քանի դեռ՝
1. Պայմանավորվածությունը ամրագրված չէ գանձման գործակալության, Ֆինանսների փոխնախագահի (Vice President) և Գլխավոր եկամտի պարբերաշրջանի պաշտոնյայի (Chief Revenue Cycle Officer) կամ նրանց նշանակած անձի կողմից ստորագրված գրավոր համաձայնագրով, և
 2. Գրավոր համաձայնագրին կցված չէ սույն Զաղաքականությունը կամ այն չի ներառում սույն Զաղաքականությանը համապատասխանող լեզու, որպես

**Վերնագիր՝ Debt Collections Policy
Debt Collections Policy**

Վարչական բաժին՝ Patient Services

ԿԱՐԵՎՈՐ ԾԱՆՈՒՑԱԳԻՐ՝

Այս փաստաթղթի պաշտոնական տարբերակը գտնվում է Զաղաքականության և ընթացակարգի կառավարչում (PPM) և կարող է վերամշակված լինել փաստաթղթի տպագրումից հետո:

իրեղեն ապացույց, և համապատասխանություն չի պահանջում գանձման գործակալությունից:

i. Արձանագրությունների պահպանում

- i. Կազմակերպությունը պետք է պահպանի սույն Զաղաքականության պահանջներին ենթարկվածությունը երաշխավորելու համար պատշաճ փաստաթղթեր:
- ii. Կազմակերպությունը պետք է սույն Զաղաքականությունը ներկայացնի Կալիֆորնիայի Department of Health Care Access and Information («HCAI»), ինչպես պահանջվում է կիրառելի օրենքով:
- iii. Կազմակերպության հետ պայմանագիր ունեցող գանձման յուրաքանչյուր գործակալությունից պահանջվում է պահպանել սպառողների պարտքերի գանձման Դաշնային և Կալիֆորնիայի օրենքների պահանջներին և բոլոր այլ պահանջների ենթարկվածությունը ցույց տվող համապատասխան այնպիսի փաստաթղթեր, որոնք հիմնված են սույն Զաղաքականության և Ֆինանսական օգնության քաղաքականության նորագույն տարբերակի վրա:
- iv. Կազմակերպությունը հիվանդի կամ երաշխավորի կողմից վճարման ենթակա գումարին վերաբերող բոլոր արձանագրությունները կպահպանի 5 տարի՝ ներառյալ, բայց չսահմանափակվելով հետևյալներով՝ (ա) Կազմակերպության կողմից ներկայացված դատավեճերի վերաբերող փաստաթղթեր, (բ) Կազմակերպության կողմից երրորդ կողմի նշանակված պարտքի պայմանագիրը և նշանակալի առնչակից արձանագրությունները, (գ) տարեկան առնվազն մեկ անգամ թարմացվող ցանկը յուրաքանչյուր անձի, ներառյալ՝ անձի անունն ու հետադարձ կապի տվյալները, որը՝ (i) կամ պարտքի գանձողն է, որին Կազմակերպությունը հանձնարարել է բժշկական պարտքը, կամ (ii) վարձվել է Կազմակերպության կողմից, որպեսզի Կազմակերպության անունից հետապնդի հիվանդի պարտքերի համար դատավեճը:

III. Սահմանումներ

- a. **Գանձման գործակալություն** նշանակում է արտաքին գործակալություն, որին հանձնարարված է կատարել Կազմակերպության համար պարտքերի գանձման գործողություններ:
- b. **Արտակարգ գանձման գործողություններ («ECA-ներ»)** նշանակում է գանձման այնպիսի գործողություններ, որոնք Կազմակերպությունը չի ձեռնարկի նախքան ողջամիտ ջանքեր գործադրելը, որոշելու համար՝ արդյո՞ք հիվանդն իրավասու է ֆինանսական օգնության համար սույն Զաղաքականության ներքո: Արտակարգ գանձման

Վերնագիր՝ Debt Collections Policy
Debt Collections Policy

Վարչական բաժին՝ Patient Services

ԿԱՐԵՎՈՐ ԾԱՆՈՒՑԱԳԻՐ՝

Այս փաստաթղթի պաշտոնական տարբերակը գտնվում է Քաղաքականության և ընթացակարգի կառավարչում (PPM) և կարող է վերամշակված լինել փաստաթղթի տպագրումից հետո:

գործողությունները սահմանված են Դաշնային կանոնակարգերի օրենսգրքում՝ 26 CFR 501(r)-6 բաժնում:

- c. **Ֆինանսական օգնության դիմում** նշանակում է այն դիմումը, որը կարող է օգտագործվել Կազմակերպության ֆինանսական օգնության ծրագրին մասնակցելու համար: Դիմումների գործընթացների վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ կարելի է գտնել Ֆինանսական օգնության քաղաքականության մեջ:
- d. **Ֆինանսական օգնության ծրագիր** նշանակում է Կազմակերպության այն ծրագիրը, որի դեպքում կիրառվում է հիվանդի մեկ միասնական դիմում՝ ինչպես ամբողջական, այնպես էլ մասնակի ֆինանսական օգնության համար: Ծրագրերի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ կարելի է գտնել Ֆինանսական օգնության քաղաքականության մեջ:
- e. **Բժշկական պարտք** նշանակում է պարտք սպառողի կողմից այնպիսի անձի, որի գլխավոր բիզնեսն է «բժշկական ծառայությունների, արտադրանքների կամ սարքերի» մատուցումը, կամ այդ անձի գործակալին կամ նշանակած անձին՝ բժշկական ծառայությունների, արտադրանքների կամ սարքերի մատակարարման համար: Բժշկական պարտքը ընդգրկում է, առանց դրանցով սահմանափակվելու, բժշկական հաշվադրերը, որոնք չեն ժամկետանցվել կամ վճարվել են:
- f. **Բժշկական ծառայություն**, արտադրանք կամ սարք, որը չի ներառում գեղարարական (կոսմետիկ) վիրահատություն, բայց ներառում է, առանց սահմանափակման, բոլոր հետևյալները՝ (ա) Որևէ ծառայություն, դեղ, դեղամիջոց, արտադրանք կամ սարք, որը արտոնագրված առողջապահական հաստատությունների կամ մատակարարների կողմից վաճառվել, առաջարկվել կամ մատուցվել է հիվանդին, (բ) հսկամող բժշկի կամ վիրաբույժի կողմից անհրաժեշտ նկատված սկզբնական կամ հաջորդ վերականգնողական վիրահատություններ և հետագա խնամք, (գ) հսկամող բժշկի կամ վիրաբույժի կողմից անհրաժեշտ նկատված սկզբնական կամ հաջորդ պրոթեզային սարքեր և հետագա խնամք, կամ (դ) Ստինքահեռացում:
- g. **Վճարման ծրագիր** նշանակում է համաձայնություն Կազմակերպության և հիվանդի միջև, որով Կազմակերպությունը առաջարկել և հիվանդը ընդունել է իր պարտքը վճարել ամսական վճարումներով: Իրավասությունը հիմնված է ընտանեկան եկամտի որոշակի շեմերի վրա՝ բացառելով Ապրուստի կենսական ծախսերի նվազեցումները:
- h. **Պարզ լեզվով ամփոփագիր** նշանակում է այն փաստաթուղթը, որը ծանուցում է հիվանդներին և այլ անձանց, որ Կազմակերպությունը ֆինանսական օգնություն է

**Վերնագիր՝ Debt Collections Policy
Debt Collections Policy**

Վարչական բաժին՝ Patient Services

ԿԱՐԵՎՈՐ ԾԱՆՈՒՑԱԳԻՐ՝

Այս փաստաթղթի պաշտոնական տարբերակը գտնվում է Քաղաքականության և ընթացակարգի կառավարչում (PPM) և կարող է վերամշակված լինել փաստաթղթի տպագրումից հետո:

առաջարկում Ֆինանսական օգնության քաղաքականության շրջանակներում՝ համաձայն Դաշնային և Կալիֆորնիայի օրենքների: Փաստաթուղթը հստակ է, հակիրճ և հեշտ հասկանալի: Պարզ լեզվով ամփոփագրի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ կարելի է գտնել Ֆինանսական օգնության քաղաքականության մեջ:

**Վերնագիր՝ Debt Collections Policy
Debt Collections Policy**

Վարչական բաժին՝ Patient Services

ԿԱՐԵՎՈՐ ԾԱՆՈՒՑԱԳԻՐ՝

Այս փաստաթղթի պաշտոնական տարբերակը գտնվում է Քաղաքականության և ընթացակարգի կառավարչում (PPM) և կարող է վերամշակված լինել փաստաթղթի տպագրումից հետո:

Վկայագրման հայտարարություն


Այս Քաղաքականությունը կներկայացվի Department of Health Care Access and Information (HCAI): Բացի այդ, այն հասանելի կդառնա Կազմակերպության կայքում:

Կազմակերպությունը սուտ վկայության համար սահմանված օրինական տուգանքի սպառնալիքի ներքո կվկայի հետևյալի մասին՝

1. Քաղաքականությունը ներկայացնող անհատը պատշաճորեն լիազորված է քաղաքականությունները ներկայացնել Կազմակերպության անունից:

2. Այս ներկայացված քաղաքականությունը ճշմարիտ և ճիշտ պատճեն է Քաղաքականության, որի համար ներառված է այս վկայագրությունը:

DocuSigned by:



56A6E2AB375D487...

Lisa Maqueira

Vice President, Finance and Chief Revenue Cycle Officer

11/6/2024

Date